ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/0567/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

27 հունվարի 2025թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկան» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն՝ ֆինանսների նախարարության գործողությունը՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկան» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. հունվարի 22-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն՝ ֆինանսների նախարարության գործողությունը՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:
Էլեկտրոնային եղանակով վարվող գործը դատավոր Գ. Վարդանյանին է մակագրվել 2025թ. հունվարի 22-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հունվարի 23-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և

122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկան» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն՝ ֆինանսների նախարարության գործողությունը՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.01.27 17:22:39 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am